«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
Տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր
Վ.Լ. Հարությունյան
01 դեկտեմբերի 2021թ.

Կ Ա Ր Ծ Ի Ք

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ԱՎԵՏՅԱՆԻ ««ԽԵԼԱՑԻ ՔԱՂԱՔ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԵՎ XXI ԴԱՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ (ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ)» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, Ը.00.02 - «ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՆՐԱ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Մասնակցում էին՝ Վլադիմիր Հարությունյան՝ *ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ.*, Ռոբերտ Սարինյան՝ *տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ*, Տիգրան Հարությունյան՝ *տնտեսագիտ. դոկտոր, դոցենտ*, Քրիստինե Բաղդասարյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ*, Մերի Մանուչարյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ*, Լիլիթ Սարգսյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Սվետլանա Դալլաքյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Բելլա Գաբրիելյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Գևորգ Հարությունյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Տաթևիկ Փարսադանյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Գրիգոր Մանուկյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Շողեր Պողոսյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակակից քաղաքի համայնքային տնտեսությունն այսօր իրենից ներկայացնում է մի հսկայական և բարդ էկոհամակարգ, որն ամենօրյա ռեժիմով բավարարում է դրա բնակչության պահանջմունքները: Իսկ պահանջմունքները բազմապիսի են ու բազմաչափ՝ տրանսպորտային տեղափոխումից մինչև բնակիչների նախնական բուժսպասարկում:

21-րդ դարում բազմաթիվ քաղաքներ մշակում և ներդնում են ամենատարբեր հայեցակարգերն ու ռազմավարությունները՝ քաղաքային տնտեսության կայուն և համաչափ զարգացման ապահովման նպատակով՝ շատ հաճախ դրանց վրա ծախսելով ահռելի ռեսուրսներ:

Դե իսկ ֆինանսատնտեսական ճգնաժամը, կորոնավիրուսային համավարակն ու այլ լոկալ իրադարձություններ, իրենց բացասական ազդեցությունը թողնելով մարդկանց սոցիալ-տնտեսական վիճակի վրա, էլ ավելի են կարևորում քաղաքային տնտեսության կառավարման բնագավառում ռազմավարական կառավարման մեթոդների ու ժամանակակից տեխնոլոգիաների կիրառությունը:

«Խելացի քաղաք» համակարգային հայեցակարգն առաջարկում է քաղաքի և դրա տնտեսության կառավարման փիլիսոփայության վերափոխում: Վերածելով քաղաքն ու դրա տնտեսությունը յուրօրինակ մի էկոհամակարգի՝ այն իր մեջ է ներառում քաղաքային տնտեսության ամենատարբեր բնագավառներն ու ճյուղերը: Ներդրվող ժամանակակից տեխնոլոգիաները ապահովում են բազմաթիվ խնդիրների լուծում, որոնք նախկինում անգամ հնարավոր չէր պատկերացնել (խցանումներ, տրանսպորտին ու այլ ծառայությունների մատուցմանը սպասող քաղաքացիներ և այլն):

Արդի պայմաններում քաղաքային տնտեսության զարգացման ռազմավարության մշակման և դրա արդյունավետ ներդրման անհրաժեշտությունն էլ պայմանավորում է տվյալ հետազոտության արդիականությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆ

Հետազոտության օբյեկտը Երեւան քաղաքն է՝ որպես սոցիալ-տնտեսական էկոհամակարգ, իսկ ուսումնասիրության առարկան՝ Երևանի քաղաքային տնտեսության կառավարման կատարելագործման հիմնական ռազմավարական ուղղությունները ժամանակակից պայմաններում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության հիմնական նպատակն է բացահայտել Երևանի քաղաքային տնտեսության կարևորագույն հիմնախնդիրները, մշակել և իրականացնել դրա զարգացման ժամանակակից ռազմավարությունը՝ հիմնված «Խելացի քաղաք» համակարգային հայեցակարգի վրա և հաշվի առնելով 21-րդ դարի պահանջները:

Նշված նպատակի իրականացման համար ատենախոսությունում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- դիտարկել «Խելացի քաղաք» հայեցակարգը և բացահայտել դրա զարգացման ու իրականացման առանձնահատկությունները,
- ուսումնասիրել քաղաքների և դրանց տնտեսությունների ռազմավարական զարգացման գիտամեթոդական հիմունքները,
- որոշել քաղաքի ռազմավարական զարգացման սոցիալ-տնտեսական հիմքերը,
- ուսումնասիրել որոշ արտասահմանյան քաղաքների և դրանց տնտեսությունների ռազմավարական զարգացման առանձնահատկությունները «Խելացի քաղաք» հայեցակարգի կիրառման տեսանկյունից,
- սահմանել Երևանի քաղաքի և դրա տնտեսության խնդիրները և զարգացման հեռանկարային ուղղությունները,
- առաջարկել Երևան քաղաքի և դրա տնտեսության զարգացման ժամանակակից ռազմավարության մշակման և իրականացման գիտամեթոդական հիմունքները,
- օպտիմալացնել Երևանի քաղաքային տնտեսության որոշ կազմակերպությունների (հանրակրթական և առողջապահական կազմակերպությունների) բաշխումը,
- որոշել Երևան քաղաքում տեղափոխման և տրանսպորտային ենթակառուցվածքների օպտիմալ մոդելը,

- մշակել շրջակա միջավայրի պահպանության համակարգի կատարելագործման առաջարկություններ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Հետազոտության արդյունքում ստացվել են գիտա-գործնական նշանակության արդյունքներ, որոնց գիտական նորույթը կայանում է հետևյալում՝

1. Առաջարկվել է Երևան քաղաքի հանրակրթական և առողջապահական օբյեկտների տեղակայման օպտիմալացման մաթեմատիկական մոդել, որը թույլ կտա հավասարաչափ բաշխել նշված հաստատությունները:
2. Ներկայացվել է Երևան քաղաքի տրանսպորտային ենթակառուցվածքների համակարգային զարգացման նոր մոդել, համաձայն որի՝ փոխվում է շարժման տարածական և ժամանակային փիլիսոփայությունը, և քաղաքի ստեղծվող նոր ենթակառուցվածքային ենթահամակարգերը թույլ կտան օպտիմալացնել մարդու տրամադրության տակ գտնվող ռեսուրսները (ժամանակ, ֆինանսներ և այլն), ինչպես նաև կրճատել վնասակար արտանետումների ծավալը:
3. Մշակվել է Երևան քաղաքի կոշտ կենցաղային թափոնների հավաքման և տեղափոխման գործընթացի օպտիմալացման մոդել, որը թույլ կտա 1 տոննա աղբի հավաքման ու տեղափոխման ծախսերը հասցնել նվազագույնի:
4. Առաջարկվել է Երևանի քաղաքապետարանի կազմակերպական կառուցվածքի կատարելագործման նոր մոտեցում, այն է՝ ստեղծել քաղաքի կառավարման ինտեգրված կենտրոն, որը՝ որպես թվային ուղեղային կենտրոն, հաշվի առնելով գործող օրենսդրական և նորմատիվ իրավական ակտերի պահանջները, լիարժեք տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և գնահատման հիման վրա կառաջարկի քաղաքային տնտեսության կողմից մատուցվող ծառայությունների ոլորտներում համապատասխան որոշումների ընդունման օպտիմալ տարբերակներ: Կենտրոնն առաջին հերթին զգալիորեն կնվազեցնի որոշումների կայացման

գործընթացում պաշտոնատար անձանց մասնակցության սուբյեկտիվության գործոնը և կնվազեցնի կոռուպցիոն ռիսկերը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳԻՏԱ-ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Իրականացված հետազոտությունից բխող առաջարկությունները, ինչպես նաև Երևանի քաղաքային տնտեսության հիմնախնդիրների լուծման համար առաջարկված մոտեցումներն ու սկզբունքները կարող են օգտագործվել Երևան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ քաղաքային էկոհամակարգի բարելավման, ինչպես նաև քաղաքային տնտեսության կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով: Որոշակի դրույթներ կարող են նաև օգտակար լինել Հայաստանի Հանրապետության այլ քաղաքների համար ևս:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

Ատենախոսության հիմնադրույթները և ստացված արդյունքները քննարկվել են Հայ-Ռուսական Համալսարանում, ինչպես նաև Բելառուսի Պետական Տնտեսագիտական Համալսարանի «Ժամանակակից Մենեջմենթ. հիմնախնդիրներ, հետազոտություններ, հեռանկարներ» 8-րդ միջազգային գիտա-գործնական համաժողովում (2019 թ.), Հայ-Ռուսական Համալսարանի 2019 թ. ուսանողական տարեկան գիտաժողովում, ՌԴ Նախագահին առընթեր Ժողովրդական տնտեսության և պետական ծառայության Ռուսական Ակադեմիայի Ուրալյան ինստիտուտի «Universe of university» միջազգային ինտերնետ-կոնֆերանսում (2020 թ.), Ռոստովի Պետական Հաղորդակցության ՈՒղիների Պետական Պամալսարանի 2020 թ. միջազգային գիտա-գործնական 5-րդ համաժողովում, Կուբանի Պետական Համալսարանի Համառուսաստանյան 5-րդ գիտա-գործնական համաժողովում (2021 թ.), «Smart cities Moscow» միջազգային առցանց ֆորումին (2021 թ.), ՀՀ ՊՆ Պաշտպանական Ազգային

Հետազոտական Համալսարանում: Ատենախոսության աշխատանքի արդյունքներն ու մի շարք դրույթներ արտացոլված են 17 գիտական հոդվածներում, որոնցից 8-ը՝ ՀՀ և ՌԴ ԲՈԿ-երի ցանկում ընդգրկված գիտական ամսագրերում:

Առանձին եզրակացություններ և առաջարկություններ, որոնք շարադրվել են ատենախոսության մեջ, օգտագործվել են ուսումնական գործընթացում («Քաղաքի կառավարում», «Պետական և մունիցիպալ կառավարում» առարկաների դասավանդում Հայ-Ռուսական Համալսարանում), ինչպես նաև դասախոսությունների ժողովածուներում՝ «Պետական կառավարում» (2019 թ.) և «Պետական կառավարում և վարչարարություն» (2021 թ.):

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԾԱՎԱԼԸ

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության տեքստը շարադրված է 139 էջի վրա՝ ներառյալ գրականության ցանկը, առանց հավելվածների:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը, ձևակերպված են հետազոտության նպատակն ու խնդիրները, տրված են օբյեկտն ու առարկան, ներկայացված են ուսումնասիրության հիմնական արդյունքներն ու գիտական նորույթը, դրանց գիտա-գործնական նշանակությունը:

Ատենախոսության **առաջին**՝ ««Խելացի քաղաք» հայեցակարգի էությունը և քաղաքային տնտեսության կառավարման ռազմավարության մեթոդաբանական հիմունքները ժամանակակից պայմաններում» գլխում ուսումնասիրվել են «Խելացի քաղաք» համակարգային հայեցակարգի գիտական ու մեթոդաբանական հիմքերը, դրա կիրառման առանձնահատկությունները, քաղաքային տնտեսության կառավարման ռազմավարական հիմնախնդիրները

ժամանակակից պայմաններում, ներկայացվում է «Խելացի քաղաք» հայեցակարգի ներդրման միջազգային փորձի համեմատական վերլուծությունը:

Ատենախոսության **երկրորդ՝** «Երևան քաղաքի քաղաքային տնտեսության վիճակի վերլուծությունը և դրա զարգացման հայեցակարգային հիմնախնդիրները» գլխում ներկայացվում է Երևանի քաղաքային տնտեսության առանձնահատկությունները՝ համեմատելով ՀՀ մարզերի հետ, բացահայտվում են քաղաքային տնտեսության էկոհամակարգային հիմնախնդիրները (ըստ տնտեսության ճյուղերի և ռազմավարական զարգացման ուղղությունների), ներկայացվում է քաղաքային տնտեսության կառավարման թվայնացման ռազմավարական ծրագիրը:

Ատենախոսության **երրորդ՝** «Երևանի քաղաքային տնտեսության կառավարման կատարելագործման հիմնական ռազմավարական ուղղությունները ժամանակակից պայմաններում» գլխում ներկայացվում են համայնքային ենթակայության նախադպրոցական, դպրոցական և առողջապահական կազմակերպությունների տեղաբաշխման օպտիմալացման մոդելը, տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացման կառավարման նոր մոտեցումը և կոշտ կենցաղային թափոնների հավաքման ու տեղափոխման օպտիմալ մոդելը, ինչպես նաև քաղաքապետարանի կազմակերպական կառուցվածքի փոփոխությունների առաջարկություններն ու նոր մոտեցումները:

Եզրակացությունում ներկայացված են հետազոտության հիմնական արդյունքները:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Չնայած իր դրական արժանիքներին, ատենախոսությունը զերծ չէ նաև թերություններից: Դրանք հետևյալն են.

1. Աշխատանքում չի դիտարկվում հիմնախնդրի գիտական մշակվածության աստիճանը, որը որոշում է հետազոտվող ոլորտի բացթողումների շարքը և որոնց լրացման հիման վրա հայցորդն ավելի արդյունավետ կկարողանար որոշել խնդիրների ուսումնասիրման շրջանակը:

2. Աշխատանքում ներկայացված է գծապատկեր 2.2-ը, որն արտացոլում է արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի: Սակայն աշխատության մեջ այն ոչ մի կերպ չի մեկնաբանվում:
3. Ատենախոսության մեջ ներկայացվել է Երևան քաղաքի տրանսպորտային ենթակառուցվածքների համակարգային զարգացման նոր մոդել, որով պետք է փոխվի տեղաշարժումներ տարածքային և ժամանակային փիլիսոփայությունը: Այս առումով ատենախոսության մեջ 3.2. պարագրաֆում առաջարկվում է, օրինակ, Երևանի շուրջ ճանապարհային օղակի ձևավորումը: Այստեղ պետք է նշել, որ Երևանի քաղաքապետարանն արդեն իսկ իրականացրել է այդ օղակի շինարարության մեծ մասը և առաջիկա տարիներին ավարտական տեսքի է բերվելու, և այդքան էլ հստակ չէ, թե հեղինակն ինչու է դա ներկայացնում որպես սեփական առաջարկ:
4. Ընդհանուր առմամբ, ատենախոսությունն իրենից ներկայացնում է Երևան քաղաքի ռազմավարական կառավարման փոքր-ինչ ձևափոխված մոտեցում, որտեղ ներառված են «սմարտացման/խելացիացման» որոշակի տարրեր: Ցանկալի կլիներ ատենախոսության մեջ օգտագործված բավականին շատ վիճակագրական տվյալների հիման վրա մշակվեին Երևանի ամբողջական թվայնացման մոտեցումներ, գնահատվեին դրանց ռիսկերը, տեղեկատվության պաշտպանության մեխանիզմները (հատկապես ռազմական իրավիճակներում):
5. Հանրակրթական և առողջապահական օբյեկտների տեղաբաշխման օպտիմալացման մշակված մոդելում որոշակիորեն բաց է թողնված այն մասը, որ այս կամ այն կերպ հայտնի դարձած և որոշակի մրցունակություն ունեցող հանրակրթական ու առողջապահական հիմնարկները ներգրավել են Հանրապետության որոշակիորեն հայտնի և լավ մասնագետներին, և շատ հաճախ, երեխաներին մանկապարտեզ կամ դպրոց տանելը և առավել ևս բժշկին այցելությունը պայմանավորված է հենց մասնագետների առկայությամբ: Հետևաբար ոչ միշտ է նոր մանկապարտեզի, դպրոցի կամ

հիվանդանոցի կառուցումը բեռնաթափում, օրինակ, Կենտրոն համայնքի մանկապարտեզները: Դրան էլ եթե գումարենք վճարովի մասնավոր ծառայություններ մատուցող կառույցների առկայությունը, նորաբաց մանկապարտեզ-դպրոց հիվանդանոցները ոչ միշտ կկարողանան ներգրավել բարձր որակավորում ունեցող և ժողովրդի վստահությունը վայելող մասնագետների: Ճիշտ կլիներ որոշակիորեն անդրադարձ լիներ նաև այս հարցերին, որպեսզի դեկլարատիվ հայտարարության տեսք չունենար:

6. Աշխատանքում առկա են մի շարք տեխնիկական վրիպակներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության վերաբերյալ կատարված դիտողությունները չեն անդրադառնում հետազոտության գիտական արժեքի վրա և չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժեքը ու ստացված արդյունքների նշանակությունը և բացասական ազդեցություն չեն թողնում հետազոտության ընդհանուր գնահատականի վրա:

Ատենախոսությունը ավարտուն գիտական հետազոտություն է, որտեղ կատարված վերլուծություններից բխող եզրահանգումների և եզրակացությունների հիման վրա արված առաջարկությունները, ինչպես նաև մշակված մոտեցումները կարող են գործնական կիրառություն գտնել Երևանի քաղաքային տնտեսության ժամանակակից հիմնախնդիրների լուծման աշխատանքներում:

Արման Ալեքսանդրի Ավետյանի ««Խելացի քաղաք» հայեցակարգը և XXI դարի քաղաքային տնտեսության կառավարման ռազմավարության հիմնախնդիրները (Երևան քաղաքի նյութերով)» թեմայով թեկնածուական ատենախոսության արդյունքներն ունեն ինչպես գիտական, այնպես էլ գործնական ու կիրառական նշանակություն:

Ատենաախոսության սեղմագիրը համապատասխանում է աշխատանքի բովանդակությանը և իր մեջ ներառում է հիմնական պայմաններն ու արդյունքները:

Արման Ալեքսանդրի Ավետյանի ««Խելացի քաղաք» հայեցակարգը և XXI դարի քաղաքային տնտեսության կառավարման ռազմավարության հիմնախնդիրները (Երևան քաղաքի նյութերով)» թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի պահանջներին, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջների, իսկ հեղինակն արժանի է Ը.00.02 – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, "Ատենախոսությունների քննարկման և կարծիքների ներկայացման" հանձնաժողովի նիստում (01.12.2021թ. արձանագրություն թիվ 7):

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. գիտաշխատող տնտեսագիտության թեկնածու **Տ.Փարսադանյան**

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ ավագ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու **Գ.Հարությունյան**

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու **Ե.Հակոբյան**

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի ՏԻ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու, Տ.Փարսադանյանի, ինստիտուտի ավագ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու Գ.Հարությունյանի և գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու Ե.Հակոբյանի ստորագրությունների իսկությունը «հաստատում եմ»'

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ գիտ. քարտուղար,
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ք. Յու. Բաղդասարյան

«01» դեկտեմբերի 2021 թ.